ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

16-ը հուլիսի 2026թ.
Ժամը 15[10]

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 07.07.2026թ.-ին՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո աշխատանքները շարունակել 14.07.2026թ.-ին:

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՋՈՒ ԳՇ ռազմանվագախմբային ծառայության պետ, գլխավոր զինվորական դիրիժոր, փոխգնդապետ Ա. Սիմոնյանը,
գնահատողներ՝
ՋՈՒ ԳՇ ռազմանվագախմբային ծառայության պետի տեղակալ, զինվորական դիրիժոր, գնդապետ Հ. Գրիգորյանը,
ՋՈՒ ԳՇ ռազմանվագախմբային ծառայության ավագ սպա, զինվորական դիրիժոր, մայոր Ս. Փափազյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով բաց մրցույթ (ԲՄ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած Մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված մասնակիցների և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած Մասնակիցների մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Երաժշտական գործիքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1	«Էս Էս Էյջ Էյջ» ՍՊԸ
2	«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ
3	«ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Մ. Հոխեյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում են /ներկայացված չեն/ հավելված N 1.1՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և լիազորագիրը՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ Ջանիբեկ Թովմասյանի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ: Ուստի համաձայն «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջների՝ անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ հավելվածի բնօրինակը՝ տնօրենի կողմից հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ և տնօրենի կողմից հաստատված լիազորագրի բնօրինակը:

- «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում են /ներկայացված չեն/ հավելված N 1-ը՝ դիմումհայտարարություն բաց մրցույթին մասնակցելու, հավելված N 1.1՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, հավելված N 1.3-ը՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը կամ իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Ուստի համաձայն «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի պահանջների՝ անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ բոլոր հավելվածների բնօրինակները՝ տնօրենի կողմից հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2.3 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 14.07.2026թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն /14.07.2026թ./ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ-ին և «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում /15.07.2026թ./ շտկել վերը արձանագրված անհամապատասխանությունները:

2.4 16.07.2026թ.-ին, ժ. 15:10-ին՝ կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում և կարգով «ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ և «ՀԱՐ ԳՐՈՒՊ 5» ՍՊԸ կողմից շտկվել են վերը արձանագրված բոլոր անհամապատասխանությունները և վերջիններիս կողմից ներկայացված հայտերը գնահատվեցին «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Մասնակիցների առաջարկած գները ըստ չափաբաժինների և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Մ. Հոխեյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հավելված 1

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակ	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Նախահաշվային գին ՀՀ դրամ	Հ/հ	Մասնակիցներ	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին	Ընտրված /հաղթող/ մասնակից
1	Հարվածային գործիքներ / Հարվածային համակարգ /	հատ	1	Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6- րդ մասի 1-ին կետի համաձայն:		1	«Էս Էս Էյջ Էյջ» ՍՊԸ	4,500,000	900,000	5,400,000	«Էս Էս Էյջ Էյջ» ՍՊԸ
						2	«Հար Գրուպ 5» ՍՊԸ	7,865,000	1,573,000	9,438,000	
						3	«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ	12,272,500	2,454,500	14,727,000	
2	սուզաֆոններ / Սուզաֆոն /	հատ	2			1	«Էս Էս Էյջ Էյջ» ՍՊԸ	4,825,000	965,000	5,790,000	«Էս Էս Էյջ Էյջ» ՍՊԸ
						2	«Հար Գրուպ 5» ՍՊԸ	15,787,500	3,157,500	18,945,000	
						3	«ԼԼԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ	18,500,000	3,700,000	22,200,000	

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են): Ըստ ներկայացված տվյալների՝ մասնակիցները ԱԱՀ վճարող են:

3.3 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ըստ չափաբաժինների «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ԲՄ ընթացակարգի ընտրված մասնակիցների և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Մ. Հոխեյան)

4.1 16.07.2026թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» բաց մրցույթում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Էս Էս Էյջ Էյջ» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից: Իսկ բավարար գնահատված մյուս մասնակիցները ճանաչվեցին այդպիսին չճանաչված մասնակից՝ ըստ համապատասխան չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկների:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.4 Սույն ընթացակարգում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն կիրառվում է տասնօրյա անգործության ժամկետ:

4.5 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Հոխեյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Մ. Հոխեյան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-26-26/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ա. Սիմոնյան
Գնահատող	Հ. Գրիգորյան
Գնահատող	Ս. Փափազյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Մ. Հոխեյան